ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/59

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3620-19 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.02.2019թ. թիվ 061/1914 գրության հիման վրա, 06.03.2019թ. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Վանաձորի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը 27.02.2019թ. թիվ 061/1914 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ Վանաձորի համայնքապետարանի ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/22 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 30-րդ, 33-րդ, 47-րդ, 50-րդ չափաբաժիններում և ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/23 ծածկագրով ընթացակարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 28-րդ, 45-րդ, 51-րդ չափաբաժիններում հաղթող մասնակից ճանաչված «Արմես գրուպ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

Վանաձորի համայնքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Պատվիրատուի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

<u>3. «Արմես գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.03.2018թ. գրությամբ դիմել է «Արմես գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3620-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«Արմես գրուպ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

<u>4. ՍՑ-ԷՍ-2019/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.03.2019թ. թիվ 26/26/3620-19 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 27.02.2019թ. թիվ 061/1914 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/22 և ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերները (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.01.2019թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 և 27.02.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները և ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. ժամը 15:30-ին կայացած նիստի թիվ 2 և 27.02.2019թ. ժամը 10:15-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները.

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել «Արմես գրուպ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 21.01.2019թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.1 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին, 30-րդ, 33-րդ, 47-րդ և 50-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Արմես գրուպ» ՍՊԸ-ին:

Վանաձորի համայնքապետարանը E-auction համակարգի միջոցով 05.02.2019թ. «Արմես գրուպ» ՍՊԸ-ին ծանուցել է Հրավերով նախատեսված կարգով և ժամկետներում ներկայացնել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը:

Հանձնաժողովը 27.02.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Արմես գրուպ» ՍՊԸ-ն Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը և Հրավերի 8.4 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկել է վերջինիս պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել «Արմես գրուպ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 21.01.2019թ. ժամը 15:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.1 կետով որոշել է Ընթացակարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 28-րդ, 45-րդ և 51-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Արմես գրուպ» ՍՊԸ-ին:

Վանաձորի համայնքապետարանը E-auction համակարգի միջոցով 05.02.2019թ. «Արմես գրուպ» ՍՊԸ-ին ծանուցել է Հրավերով նախատեսված կարգով և ժամկետներում ներկայացնել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը:

Հանձնաժողովը 27.02.2019թ. ժամը 10:15-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Արմես գրուպ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը և Հրավերի 8.4 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկել է վերջինիս պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 8.2 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 7.24 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն համակարգի միջոցով ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 7.24 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:
- 8.4 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Վանաձորի համայնքապետարանը «Արմես գրուպ» ՍՊԸ-ին 05.02.2019թ. ծանուցել է Հրավերով սահամանված կարգով և ժամկետներում ներկայացնել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը:

- «Արմես գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և պայմանագիրը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արմես գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի ապահովումը և պայմանագիրը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Հրավերի 8.4 կետով սահմանված պահանջները, ինչի արդյունքում զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 06.03.2019թ. թիվ 26/26/3620-19 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**